

2999



Ի. ՍՏԱԼԻՆ

ԳՅՈՒՂԻ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

3 K 33

9-68

ԿՈՒՍՅՐԱՏ 1933
ՅԵՐԵՎԱՆ

8195 JUN 2005

13 JUN 2005

Ի. ՍՏԱԼԻՆ

ՅԿ33

9-68

ար.

ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ՃԱՌ ՀԱՄ. Կ. (Բ.) Կ.Կ. Կ.-Ի ՅԵՎ Կ.Վ.Հ.-Ի

ՄԻԱՅՑԱԼ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ 1933 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ)

1098
37

ԿՈՒՍՀՐԱՏ 1933
ՑԵՐԵՎԱՆ



2999

ԳՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ՃԱՌ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-Ի ՅԵՎ ԿՎՀ-Ի ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄՈՎ
1933 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ)

Ընկերներ,

Յես կարծում եմ, վոր հառախոսները ճիշտ պատկերացին դյուղի կուսաշխատանքի վիճակը, նրա թերությունները, նրա արժանիքները, մանավանդ նրա թերությունները: Յեվ այնուամենայնիվ, յես կարծում եմ, վոր նրանք չառացին ամենազրխավորը մեր դյուղի աշխատանքի թերությունների նկատմամբ, հրապարակ չհանեցին այդ թերությունների արժատները: Մինչդեռ այդ կողմն ամենից ավելի հետաքրքիր և մեզ համար: Ուստի, թույլ տվեք իմ կարծիքը հայտնել դյուղի մեր աշխատանքի թերությունների մասին, հայտնել այն ամբողջ ուղղամտությամբ վորը հատուկ և բայելեկներին:

Վո՞րն և վերջին տարում՝ 1932 թվականին դյուղում մեր կատարած աշխատանքի գլխավոր թերությունը:

Գլխավոր թերությունն այն և, վոր այս տարի հացամթերումները մեզ մոտ կատարվեցին շավելի մեծ գծավորություններով, քան նախորդ տարում, քան 1931 թվին:

Այդ վոչ մի կերպ չի կարելի բացատրել բերքի վատ վիճակը, վորովհետև այս տարի մեր բերքն անցյալ տարվանից վատ չի, այլ ավելի լավ և: Վոչ վոք չի կարող ժխտել, վոր 1932 թվականին ընդհանուր բերքն ավելի յե, քան 1931 թվականին, յերբ ԽՍՀՄ-ի հյուսիս-արևելյան հինգ հիմնական շրջաններում յերաշտն դրալի չափով կրճատել եր յերկրի հացահատիկային բալանը: Իհարկե, մենք 1932 թվականին ևս բերքի վորոչ կորուստ ունեցանք կուրանում ու Տերեկում, Ինչպես և Ուկրայնայի մի քանի շրջաններում՝ կլիմայական աննպատ պայմանների պատճառով: Սակայն, չի կարող տարակույս լինել, վոր այդ կորուստները չեն կարող կհանել կապել այն կորուստների, վոր ունեցանք մենք 1931 թվա-

կանին ԽՍՀՄ-ի հյուսիս-արևելյան հինգ հիմնական շրջաններում առաջացած յերաշտի պատճառով: Հետևաբար 1932 թվականին մենք ավելի շատ հացահատիկ ունեինք, քան 1931 թվականին: Այնուհանդերձ, չնայած այդ հանգամանքին, 1932 թվականին հացամթերումները կատարվեցին մեղ մոտ ավելի մեծ դժվարությամբ, քան նախորդ տարում:

Ինչո՞ւմն է բանը: Վորո՞նք են մեր աշխատանքի այդ թերություն պատճառները: Ինչո՞վ բացատրել այդ անհամապատասխանությունը:

1) Դա նախ և առաջ բացատրվում է նրանով, վոր սեղերում աշխատող մեր ընկերները, մեր դյուղական աշխատողները, չկարողացան հաշվի առնել դյուղի այն նոր պայմանները, վորոնք ստեղծվել էին հացահատիկի կոլտնտեսական առևտուր հայտարարվելու շնորհիվ, և վորովհետև նրանք հաշվի չառան այդ նոր պայմանները, հենց այդ պատճառով էլ չկարողացան վերակազմել իրենց աշխատանքը նոր ձևով՝ համաձայն նոր պայմանների: Քանի դեռ հացահատիկի կոլտնտեսական առևտուր չկար, քանի դեռ չկար հացահատիկի յերկու զին՝ պետական ու շուկայական, դյուղում գոյություն ունի մի դրություն: Հացահատիկի կոլտնտեսական առևտուր հայտարարվելուց հետո դրությունը պետք է փոխվեր կարող էր լինել, վորովհետև կոլտնտեսական առևտրի հայտարարումը նշանակում է որինականացնել հացահատիկի գինը, վորն ավելի բարձր է, քան պետության սահմանած գինը: Այլևորդ է ապացուցել, վոր այդ հանգամանքը պետք է վորոշ զսպվածություն ստեղծեր դյուղացիներին մոտ՝ պետությանը հաց հանձնելու դործում: Դյուղացին այսպես և հաշվում՝ «հայտարարված է հացահատիկի կոլտնտեսական առևտուր, որինականացված է շուկայի գինը, շուկայում յես կարող եմ նույն քանակությամբ հացի համար ստանալ ավելի շատ, քան հացահատիկը պետությանը հանձնելիս, հետևաբար, յեթե յես հիմար չեմ, յես պետք է հացահատիկը միառժամանակ պահեմ, քիչ՝ հանձնեմ պետությանը, ավելի շատ թողնեմ կոլտնտեսական առևտրի համար և այդպիսով ավելի շատ ստանամ վաճառված հացահատիկի նույն քանակի համար»:

Ամենապարզ և բնական տրամաբանություն:

Սակայն այստեղ ցավն այն է, վոր մեր դյուղական աշխատողները, համենայն դեպս նրանցից շատերը չհասկացան այդ պարզ

և բնական բանը: Կոմունիստները խորհրդի իշխանության առաջադրանքները չվիճեցնելու համար այդ նոր պայմաններում պետք է բերքահավաքի հենց առաջին որերից՝ դեռ 1932 թ. հուլիս ամսին, ամեն կերպ ուժեղացնեին և խթանեին հացամթերումները: Այդ էր պահանջում դրությունը: Սակայն ի՞նչպես վարվեցին նրանք իրականում: Փոխանակ հացամթերումները խթանելու, նրանք սկսեցին խթանել ամեն տեսակ ֆոնդերի կազմումը, դրանով իսկ ուժեղացնելով հաց հանձնողների զսպվածությունը՝ պետության հանդեպ իրենց պարտականությունները կատարելու դործում: Չհասկանալով նոր դրությունը, նրանք սկսեցին վախենալ վոր թե նրանից, վոր դյուղացիներին զսպվածությունը հացահատիկ հանձնելու դործում կարող է դանդաղեցնել հացամթերումները, այլ նրանից, վոր դյուղացիները գլխի չեն ընկնի միառժամանակ իրենց մոտ պահել հացը՝ հետադարձ կոլտնտեսական առևտրի դժով շուկա հանելու համար և հանկարծ իրենց ամբողջ հացահատիկը կհանձնեն երկվատորին:

Այլ խոսքով, մեր դյուղական կոմունիստները՝ զեթ նրանց մեծ մասը կոլտնտեսական առևտուրը մարտեցին նրա միայն դրական կողմից, ըմբռնեցին և յուրացրին նրա միայն դրական կողմը, սակայն բնավ չհասկացան և չյուրացրին կոլտնտեսական առևտրի բացասական կողմերը, չհասկացան, վոր կոլտնտեսական առևտրի բացասական կողմերը կարող են մեծ վնաս պատճառել պետությանը, յեթե նրանք, այսինքն՝ կոմունիստները հացահատիկի բերքահավաքի առաջին իսկ որերից ամբողջ թափով չսկսեն խթանել հացամթերման կամպանիան:

Յեվ այդ սխալը կատարեցին վոր միայն կոլտնտեսությունների աշխատողները: Այդ սխալը թույլ տվին նաև խորհրտնտեսությունների գերեկաորները, վորոնք հանցագործ կերպով իրենց մոտ պահելով պետությանը հանձնելիք հացը, սկսեցին դրսում վաճառել վերջինս ավելի բարձր գնով:

Իրենց հայտնի վորոշման մեջ հաշվի առել էին արդյոք ժողկոմխորհն ու Կենտկոմը հացահատիկի կոլտնտեսական առևտրի կապակցությամբ ստեղծված այդ նոր պայմանները: Այո, հաշվի առել էին: Այդ վորոշման մեջ ուղղակի ասված է, վոր հացահատիկի կոլտնտեսական առևտուրը կարելի յե սկսել միայն այն ժամանակ, յերբ ամբողջովին և լիովին կատարված կլինի հացամթերումների պլանը և կհավաքվի սերմացուն: Այստեղ

ուղղակի ասված է, վոր միմիայն հացամթերումները, սերմացվի հավաքումը ախարտելուց հետո՝ մոտավորապես 1933 թ. հունսվարի 15-ին, միմիայն այդ պայմանները կատարելուց հետո կարելի կլինի սկսել հացահատիկի կոլտնտեսական առևտուրը։ Ժողկոմխորհը և Կենտկոմն իրենց այդ վորոշումով կարծես ասելիս լինեյին մեր գյուղական աշխատողներին՝ մի՛ վարադուրեք ձեր ուղադրությունը ֆոնդերի ու ամեն տեսակ պաշարների հուշատարությամբ, մի՛ շեղվեք զլիսովոր խնդրից, ծավալեցեք հացամթերումները բերքահավաքի հենց սուսվին որերից և զարկ տվեք նրանց, վորովհետև առաջին պատվիրանն է՝ կատարել հացամթերումների սլանը, յերկրորդ պատվիրանն է՝ հավաքել սերմացուն և միմիայն այդ պայմանները կատարելուց հետո կարող եք սկսել և ծավալել հացահատիկի կոլտնտեսական առևտուրը։

Կենտկոմի Գաղղյուրոյի և Ժողկոմխորհի սխալը թերևս այն էր, վոր նրանք բավականաչափ համառությամբ չհշտեցին գործի այդ կողմը և բավականաչափ բարձր չնախադրուչացրին մեր գյուղական աշխատողներին կոլտնտեսական առևտրում թաղնված վտանգի մասին։ Իսկ վոր նրանք այդ վտանգի մասին նախադրուչացրել էյին և նախադրուչացրել էյին անհրաժեշտ պարզությամբ, — դրանում վոչ մի կասկած չի կարող։ Պետք է խոստովանել, վոր Կենտկոմը և Ժողկոմխորհը մի քիչ զերադնահատեցին տեղերում՝ վոչ միայն չըջաններում, այլև մարզերում աշխատող մեր ընկերների լենինյան կոլիվածությունը և հեռատեսությունը։

Գուցե կարիք չկա՞ր հայտարարել հացահատիկի կոլտնտեսական առևտուրը։ Գուցե դա սխալ էր, մանավանդ յեթե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր կոլտնտեսական առևտրին հատուկ են վոչ միայն դրական, այլև բացասական կողմեր։ Վո՞չ, դա սխալ չէր։ Հեղափոխական և վոչ մի ձեռնարկում ապահովված չե մի քանի բացասական կողմերից, յեթե նա սխալ և իրադրծվում։ Նույնը պետք է ասել նաև հացահատիկի կոլտնտեսական առևտրի մասին։ Կոլտնտեսական առևտուրը հարկավոր է և ձեռնառու յն ինչպես գյուղին, այնպես էլ քաղաքին, թե՛ բանվոր դատակարգին և թե՛ գյուղացիությանը։ Յեվ հենց վորովհետև նա ձեռնառու յն, անհրաժեշտ էր մտցնել այդ առևտուրը։

Ինչո՞ւ էյին զեկավարվում Ժողկոմխորհը և Կենտկոմը մեծացնելով կոլտնտեսական առևտուրը։

Նախ և առաջ նրանով, վոր ընդարձակեն քաղաքի և գյուղի ասղանքաչըջանառության բաղան և բարելավեն բանվորներին գյուղատնտեսական մթերքներ, իսկ գյուղացիներին՝ քաղաքի արտադրանք մատակարարելու գործը։ Տարակույս չի կարող լինել, վոր միմիայն պետական և կոոպերատիվ առևտուրը բավական չե դրա համար։ Ասղանքաչըջանառության այդ ուղիները պետք եր լրացնել կոլտնտեսական առևտրի նոր ուղիով։ Յեվ մենք լրացրինք՝ մտցնելով կոլտնտեսական առևտուրը։

Ապա նրանք զեկավարվեցին նրանով, վոր հացահատիկի կոլտնտեսատրի միջոցով յեկամտի լրացուցել աղբյուր ասն կոլտնտեսականին և ամբացեն նրա տնտեսական դրությունը։

Վերջապես նրանք զեկավարվեցին նրանով, վոր կոլտնտեսական առևտուր մտցնելով, գյուղացուն նոր մղում տան՝ բարելավելու կոլտնտեսությունների աշխատանքը թե՛ ցանքի գծով և թե՛ բերքահավաքի գծով։

Գուցե զիտեք, վոր Ժողկոմխորհի ու Կենտկոմի այդ բոլոր նկատառումներն ամբողջովին ու լիովին հաստատվեցին կոլտնտեսությունների վերջին ժամանակվա կյանքին վերաբերյալ վատեություն։ Կոլտնտեսությունների ամբացման պրոցեսի ուժեղացումը, կոլտնտեսություններից դուրս դալու գեպքերի դադարումը, մեհատնտեսների հարսնուն ձգտումը դեպի կոլտնտեսությունները, կոլտնտեսականների ձգտումը՝ ավելի խիստ ընտրություն կատարել նոր ընդամիսդ անդամների մեջ, — այս բոլորը և դրա նման շատ բաներ անվիճելիորեն վկայում են, վոր կոլտնտեսական առևտուրը վոչ միայն չթուլացրեց, այլ ընդհակառակն ուժեղացրեց և ամբողջեց կոլտնտեսությունների դրությունը։

Հետևաբար մեր գյուղի աշխատանքի թերությունները բացատրվում են վոչ թե կոլտնտեսական առևտրով, այլ նրա վո՞չ միշտ ճիշտ կիրառումով, նոր պայմանները հաշվի առնել չգիտեսարով, իրենց շարքերը հացահատիկի կոլտնտեսական առևտրի ստեղծած նոր պայմանների համաձայն վերակառուցելու անկարողությամբ։

2) Մեր գյուղի աշխատանքի յերկրորդ թերությունն այն է, վոր տեղերում մեր ընկերները, և վոչ միայն այդ ընկերները, չեն հասկացել գյուղի մեր աշխատանքի պայմանների այն փոփոխումը,

վորը տեղի ունեցավ հացահատիկային հիմնական շրջաններում հողատնտեսությունների տիրապետող դերքի հաստատման շնորհիվ: Մենք բոլորս ել ուրախանում ենք, վոր տնտեսությունների հողատնտեսական ձևեր դարձել են տիրապետող ձև մեր հացահատիկային շրջաններում: Սակայն դեռ բոլորը չեն հասկանում այն, վոր այդ համապատասխանությունը չի նվազեցնում, այլ ավելացնում է մեր հողագործությունը և մեր պատասխանատվությունը գյուղատնտեսության զարգացման դործում: Շատերը կարծում են, թե քանի վոր ձեռք է բերված, ասենք՝ 70 կամ 80 տոկոսով կոլեկտիվացում այս կամ այն շրջանում, այս կամ այն մարզում, ապա դրանով արդեն ամեն ինչ արված է, և մենք կարող ենք թողնել դործն իրերի բնական ընթացքին, թողնել դործն ինքնահոսի, յենթադրելով, վոր կոլեկտիվացումն ինքը կանի իր դործը, ինքը կբարձրացնի գյուղատնտեսությունը: Սակայն դա խորը մոլորություն է, ընկերներ: Իրոք կոլեկտիվ տնտեսության՝ վորպես տնտեսության գերախոսող ձևին անցնելը չի նվազեցնում, այլ ավելացնում է մեր հողագործությունը գյուղատնտեսության շուրջը, չի նվազեցնում, այլ մեծացնում է կոմունիստների ղեկավար դերը գյուղատնտեսության բարձրացման առաջադրում: Ինքնահոսն այժմ ամեն ինչ քան յերբևիցե վտանգավոր և գյուղատնտեսության զարգացման համար: Ինքնահոսն այժմ կարող է վտանգանել ամբողջ դործը:

Քանի դեռ գյուղում տիրապետում էր մենատնտեսը, կուսակցությունը կարող էր իր միջամտությունը գյուղատնտեսության զարգացման դործին սահմանափակել ողնության առանձին ակտերով, խորհուրդներով կամ նախադրույթներով: Այն ժամանակ մենատնտեսն ինքը պետք է հողար իր տնտեսության մասին, վորովհետև նա չէր կարող մի ուրիշի վրա բարդել պատասխանատվությունն այդ տնտեսության համար, վորը հանդիսանում էր նրա անձնական տնտեսությունը, և չէր կարող հույս դնել ուրիշի վրա, բացի իրենից: Այն ժամանակ մենատնտեսն ինքը պետք է հողար ցանքի մասին, բերքահավաքի մասին և սոճասարակ գյուղատնտեսական աշխատանքի բոլոր պրոցեսների մասին, յեթե նա չէր ուզում առանց հացի մնալ և սովի գոհ գնալ: Գործն էլայնս փոխվեց կոլեկտիվ տնտեսության անցնելուց հետո: Կոլտնտեսությունն անհատական տնտեսություն չէ: Կոլտնտեսականները հենց այդպես ել ասում են այժմ. «Կոլտնտեսությունը ե՛լ իմն է, ե՛լ իմը չէ: Նա իմն է, բայց միեւնոյն ժամանակ նա պատկանում է ի վանին, Թիվիդ»

սկին Միխայիլին և կոլտնտեսության մյուս անդամներին. Կոլտնտեսությունն ընդհանուրինն է»: Այժմ նա կոլտնտեսական է, յերևելավ մենատնտեսը և այսօրվա կոլեկտիվիստը, — այժմ նա կարող է պատասխանատվությունը դնել և հույսը դնել կոլտնտեսության մյուս անդամներին վրա, դիտենարով, վոր կոլտնտեսությունն առանց հացի չի թողնի նրան: Այդ պատճառով նրա՝ կոլտնտեսականի հողերը պահպանելն, համեմատած անհատական տնտեսություն ունեցած ժամանակվա հետ, վորովհետև տնտեսության հողերը և պատասխանատվությունն այժմ բաշխված են բոլոր կոլտնտեսականների միջև:

Ի՞նչ է հետևում դրանից: Դրանից հետևում է այն, վոր այժմ տնտեսությունը վարելու պատասխանատվության ծանրություն կենտրոնն առանձին գյուղացիներից անցել է կոլտնտեսության ղեկավարող կորիդին: Այժմ գյուղացիները պահանջում են հող տանել տնտեսության մասին և խելացի կերպով վարել դործը, վոչ թե իրենցից, այլ կոլտնտեսության ղեկավարությունից, կամ ավելի ճիշտ՝ վոչ այնքան իրենցից, վորքան կոլտնտեսության ղեկավարությունից: Իսկ ի՞նչ է նշանակում այդ: Այդ նշանակում է, վոր այժմ արդեն կուսակցությունը չի կարող սահմանափակվել գյուղատնտեսության զարգացման միջամտելու առանձին ակտերով: Նա պետք է այժմ իր ձեռքը վերցնի կոլտնտեսությունների ղեկավարությունը, պատասխանատվություն ստաննի աշխատանքի համար և ողնի կոլտնտեսականներին՝ առաջ տանելու իրենց տնտեսությունը. դիտություն ու տեխնիկայի սովորների հիման վրա:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Կոլեկտիվ տնտեսությունը խոշոր տնտեսություն է: Սակայն խոշոր տնտեսությունը չի կարելի փորել առանց սլանի: Հողագործության մեջ հարյուրավոր, խիլ յերբեմն նաև հազարավոր տնտեսություններ ընդգրկող խոշոր տնտեսությունը կարելի չէ վարել միմիայն պլանային ղեկավարությունից: Առանց դրան նա կբաշխվի ու կկործանվի: Ահա ձեզ կոլտնտեսական կարգերի մի նոր պայման էս, վորն արմատապես տալքերվում է անհատական մանր տնտեսություն վարելու պայմաններից: Կարելի՞ չէ արդյոք այդպիսի տնտեսություն վարելու դործը թողնել այսպես ասած իրերի բնական ընթացքին՝ ինքնահոսին: Պարզ է, վոր չի կարելի: Այդպիսի տնտեսություն վարելու համար պետք է ապահովել կոլտնտեսությունը

տարրական գրագիտութիւնն ունեցող, անտեսութիւնն պլանավորելու և կազմակերպութեամբ ձևով վարելու ընդունակ մարդկանց վերջ միջինումով: Հասկանալի չէ, վոր առանց խորհրդային իշխանութեան սխառմատեղի միջամտութեանը կոլտնտէրներարութեանը գործում, առանց նրա սխառմատեղի ողնութեան, հնարավոր չէ կազմակերպել այդպիսի անտեսութիւն: Իսկ ի՞նչ է հետևում դրանից: Դրանից հետևում է այն, վոր կոլտնտեսական կարգերը չեն նվազեցնում, այլ ավելացնում են կուսակցութեան ու կոոպութեան հողացողութեանն ու պատասխանատվութեանը դուրս դառնալու զարգացման ասպարեղում: Դրանից հետևում է, վոր կուսակցութեանը, յիշեն նա ուղում է ղեկավարել կոլտնտեսական շարժումը, պետք է թափանցի կոլտնտեսական կյանքի ու կոլտնտեսական ղեկավարութեան բոլոր մանրամասնութեանների մեջ: Դրանից հետևում է, վոր կուսակցութեանը, յիշեն նա ուղում է ղեկավարել կոլտնտեսական շարժումը, պետք է թափանցի կոլտնտեսական կյանքի ու կոլտնտեսական ղեկավարութեան բոլոր մանրամասնութեանների մեջ: Դրանից հետևում է, վոր կուսակցութեանը չպետք է նվազեցնի, այլ բաղաձայնակի իր կոպերը կոլտնտեսութեանների հետ, վոր նա պետք է գիտենա կոլտնտեսութեաններում տեղի ունեցող բոլոր անցուղարձերը, վոր պետքի ժամանակին ողնութեան հասնի և կանխի կոլտնտեսութեաններին սպառնացող վտանգը:

Իսկ ի՞նչ ենք տեսնում մենք իրականում: Իրականում մենք տեսնում ենք, վոր մի շարք շրջանային ու մարզային կազմակերպութեաններ կարված են կոլտնտեսութեանների կյանքից, նրանց պահանջներից: Նստած են մարդիկ դրասենյակներում և լինումով կերպով ճոճացնում են դրիչը, առանց նկատելու, վոր կոլտնտեսութեանների զարգացումն առաջ է գնում բյուրոկրատիկ գրասենյակների կողմով: Առանձին ղեկներում կոլտնտեսութեաններից կարված լինելը հասել է այն աստիճանի, վոր յերկրային կադմակերպութեանների մի քանի անդամներ կոլտնտեսութեանների դործերին տեղեկացել են վոչ թե իրենց մոտ համապատասխան շրջանային կազմակերպութեաններից, այլ կենտրոնի անդամներից Մոսկվայում: Այդ ցավալի չէ, բայց փաստ է, ընկերներ: Անհատական անտեսութեաններից կոլտնտեսութեաններին անցնելու հետևանքը պետք է հանգեր կոմունիստների ղեկավարութեան ու ժեղացմանը դուրսում: Բայց իրոք, մի շարք ղեկներում այդ

անցման հետևանքը յեղավ այն, վոր կոմունիստները ներհանգին դափնիների վրա, հոկտոբրայով կոլեկտի լացման բարձր տոկոսով և դործը թողին լինահասի, դործը թողին իրերի բնական ընթացքին: Կոլեկտիվ անտեսութեան պլանային ղեկավարման պրոբլեմը պետք է դրդեր կոմունիստներին ուժեղացնել իրենց ղեկավարութեանը կոլտնտեսութեաններում, բայց իրականում մի շարք ղեկներում ստացվեց այն, վոր կոմունիստները մնացին ձեռնուհաշի, իսկ կոլտնտեսութեաններում դործ ելին տեսնում նախկին սպիտակ սպաները, նախկին պետյուրականները և ընդհանրապես բանվորների ու դյուղացիների թշնամիները:

Այդ է մեր դյուղի աշխատանքի թերութեանների յերկրորդ պատճառը:

3) Մեր դյուղի աշխատանքի թերութեանների յերկրորդ պատճառն այն է, վոր մեր ընկերներից շատերը գերադնահատեցին կոլտնտեսութեանները վորպես անտեսութեան նոր ձև, գերադնահատեցին և սրբացրին կոլտնտեսութեանները: Նրանք գտան, թե քանի վոր կան կոլտնտեսութեանները վորպես անտեսութեան սոցիալիստական ձև, ապա դրանով արդեն կա ամեն ինչ, դրանով արդեն ապահովված է կոլտնտեսութեանների դործի կանոնավոր վարումը, կոլեկտիվ անտեսութեան ճիշտ սլանավորումը, կոլտնտեսութեանների վերածումն որի նախկին սոցիալիստական անտեսութեանների: Նրանք չհասկացան, վոր կոլտնտեսութեանները՝ իրենց կազմակերպական կառուցվածքով, գեոթույ են և կարիք ունեն կուսակցութեան լուրջ ոգնութեանը՝ թե՛ այդ անտեսութեաններին ստուգված բայլը չեկկան կադերի մատակարարելու իմաստով և թե՛ կոլտնտեսութեան դործերի ընթացիկ ղեկավարման մտքով: Սակայն այդ գեոթուրը չէ և նույնիսկ զլխավորը չէ: Այստեղ զլխավոր թերութեանն այն է, վոր մեր ընկերներից շատերը գերադնահատեցին կոլտնտեսութեանները՝ վորպես դյուղատնտեսութեան կազմակերպման նոր ձևի՝ ուժերն ու հնարավորութեանները: Նրանք չհասկացան, վոր կոլտնտեսութեանը, չնայած վոր հանդիսանում է անտեսութեան սոցիալիստական ձև, ինքնին գեո ամեննին չի ստիպում ամեն տեսակի վտանգներից, գեո ամեննին յերաշխիք չի տալիս, վոր կոլտնտեսութեան ղեկավարութեան մեջ մուտք չեն դործի ամեն տեսակ հակահեղափոխական տարրեր, չի ապահովված այն բանից, վոր վորոշ պայմաններում հակահեղափոխա-

Կան տալրերն իրենց նախատակների համար կարող են ուղտապորձել
Կոյանտիսույթունները :

Կոլտնտեսությունը տնտեսական կազմակերպության սոցիալիստական ձև է, այնպես, ինչպես խորհուրդները հանդիսանում են Բուդապեշտի կազմակերպության սոցիալիստական ձևը: Ինչպես Կոլտնտեսությունները, այնպես էլ խորհուրդները հանդիսանում են մեր հեղափոխության մեծագույն նվաճումը, բանվոր դասակարգի մեծագույն նվաճումը: Սակայն կոլտնտեսությունները և խորհուրդները ներկայացնում են սոսկ կազմակերպման ձև, ճիշտ է՝ սոցիալիստական ձևը, բակայն՝ այնուհանդերձ կազմակերպման ձևը: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ բովանդակությամբ կլցվի այդ ձևի մեջ: Մենք զբաղվում ենք ընտելացնելու ու զինվորական պատգամավորների խորհուրդները վերջը չընկնող պաշտպանել են հակահեղափոխությունը՝ հեղափոխության դեմ: Այդպես է յեղել զորքը մեզ մոտ 1917 թվականի հուլիսին, յերբ խորհուրդները զեկավարում էին մենեխիկներն ու եսերները, խորհուրդները հովանավորում էին հակահեղափոխությանը՝ հեղափոխության դեմ: Այդպես էր զորքը Գեոմանիայում 1918 թվականի վերջերին, յերբ խորհուրդները զեկավարում էին սոցիալ-դեմոկրատները և յերբ նրանք հովանավորում էին հակահեղափոխությունը՝ հեղափոխության դեմ: Հետևաբար բանը միայն խորհուրդները չեն, վարպես կազմակերպության ձևը, թեպետ այդ ձևն իսկ հեղափոխական մեծագույն նվաճում է: Բանը նախ և առաջ խորհուրդների աշխատանքի բովանդակությունն է, բանը խորհուրդների աշխատանքի բնույթն է, բանն այն է, թե հատկապես ո՞վ է զեկավարում խորհուրդները՝ հեղափոխականները, թե՞ հակահեղափոխականները: Հենց զբանով էլ բացատրվում է այն փաստը, վոր հակահեղափոխականները միշտ խորհուրդների դեմ չեն: Որինակ՝ հայտնի յե, վոր ռուսական հակահեղափոխության պարագլուխ Միլյուկովը կրոնչտագաթի ապստամբության ժամանակ կողմնակից էր խորհուրդների, բայց առանց կոմունիստների: Քնորհուրդներն առանց կոմունիստների»—ասա թե վորն էր այդ ժամանակ ռուսական հակահեղափոխության պարագլուխ Միլյուկովի լույունը: Հակահեղափոխականները հասկացել էին, վոր բանն իրենք խորհուրդները չեն, այլ նախ և առաջ այն, թե ով կշեկավարի նրանց: Եւրոնր պետք է առել նաեւ կրոնտեսությունների մասին:

Կոլանտեսութեանները վորպէս տնտեսութեան կազմակերպման սոցիալիստական ձև կարող են հրաշքներ դործել տնտեսական շինարարութեան ասպարիկում, յեթե նրանց գլուխ կանգնած լինեն խակահան հեղափոխականներ՝ բայլչեիկները, կոմունիստները, և ընդհակառակը, կոլանտեսութեանները կարող են, վորոչ չըջանում, հակահեղափոխական ամեն տեսակ դործողութեաններէ բուն դառնալ, յեթե այնտեղ տիրութեան անեն Լեսերները և մենչեիկները, պետլյուրական սպաները և այլ սոցիալիզմի դիարդիականները, նախկին զենիկիկյանները և կոլչակականները: Ընդամին պետք և աչքի առննալ, վագր կոլանտեսութեանները, վորպէս կազմակերպութեան ձևեր, վոչ միայն ստահովմած չեն հակախորհրդային տարրերի ներս սողակելուց, այլ սկզբում նույնիսկ վորոչ հարմարութեաններ են ներկայացնում հակահեղափոխականներին այդ կոլանտեսութեանները ժամանակավորապէս սղտագործելու համար: Քանի զեռ դյուզացիները վարում ելին անհատական տնտեսութեան, նրանք ցիր ու ցան և բաժանված ելին իրարից, վորով հակախորհրդային տարրերի հակահեղափոխական սողոսկումները դյուզացիութեան միջավայրում չեկին կարող մեծ արդունք տալ: Միանշամայն այլ պատկեր և առաջվում դյուզացիները կոլեկտիվ տնտեսութեան անցնելուց հետո: Այստեղ դյուզացիք հանձինս կոլանտեսութեանների ունեն մաստայական կազմակերպութեան պատրաստի ձևը: Այդ պատճառով հակախորհրդային տարրերի թափանցումը կոլանտեսութեաններէ մեջ և նրանց հակախորհրդային դործունչութեանը կարող և շատ ավելի մեծ արդունք տալ: Պետք և յենթագրել, վոր այդ բոլորը հաշիվ չեն առնում հակախորհրդային տարրերը: Հայտնի չե, վոր հակահեղափոխականների մի մասը, որինակ՝ Հյուսիսային Կովկասում, ինքն և աշխատում ստեղծել կոլանտեսութեանների նման մի բան, սղտագործելով դրանք, վորպէս լեզալ լողարկում իր ընդհատակյա կազմակերպութեանները հոռաբար: Նմանապէս հայտնի չե, վոր հակախորհրդային տարրերն այն մի շարք չըջաններում, վորտեղ նրանք զեռ չեն մերկացվել և չեն ջախջախվել, սիրով մտնում են կոլանտեսութեանները, նույնիսկ դովաբանում են կոլանտեսութեանները, վորպէսզի կոլանտեսութեանների ներսում հակահեղափոխական աշխատանքի բնէր ստեղծեն: Նմանապէս հայտնի չե, վոր հակախորհրդային տարրերի Լեմար ինքը կոլանտեսութեանների կողմնակից և հայտարարում

իրեն, սլաքանով, վոր կոտնտեսութիւններում կոմունիստ չլինին: «Կոտնտեսութիւններ առանց կոմունիստներին» — ահա այսպիսի լոգոնք են վորդեգրել այժմ հակախորհրդային տարրերը: Հեռաւարտը բանը միայն իրենք կոտնտեսութիւնները չեն, վորպէս կազմակերպութեան սոցիալիստական ձև, այլ նախ և առաջ այն, թե ի՞նչ բովանդակութիւն է տրվում այդ ձևին: Նախ և առաջ բանն այն է, թե ո՞վ է կանգնած կոտնտեսութիւնների գլուխ և ո՞վ է զեկավարում վերջիններս:

Լենինից մի տեսակետից կոտնտեսութիւնները, ինչպես և խորհրդային կոտնտեսութիւնները՝ վերցրած վորպէս կազմակերպութեան ձև, զենք են և միմիայն զենք: Վորոչ պայմաններում այդ զենքը կարելի չե ուղղել հեղափոխութեան դեմ: Այն կարելի չե ուղղել հեղափոխութեան դեմ: Այն կարելի չե ուղղել հակահեղափոխութեան դեմ: Նա կարող է ծառայել բանվոր դատակարարին ու գյուղացիութեանը: Նա կարող է ծառայել վորոչ պարմաններում բանվոր դատակարարի ու գյուղացիութեան թշնամիներին: Ամբողջ գործը նշանումն է, թե ո՞ւմ ձեռքին է դրնում այդ զենքը և ո՞ւմ զենք և ուղղվելու նա:

Այդ սկսում են հասկանալ բանվորների ու գյուղացիների թըշնամիները, վորոնք զեկավարվում են իրենց դատակարարային բնապարտով: Այդ դժբախտաբար դեռ չեն հասկանում մեր մի քանի կոմունիստները:

Յեւ վորովհետեւ մեր մի քանի կոմունիստները չեն հասկացել այդ հասարակ բանը, հենց այդ պատճառով էլ մենք ունենք այժմ այնպիսի պատկեր, վոր մի շարք կոտնտեսութիւններում գործերը կառավարում են լավ զիմակալորված հակախորհրդային տարրերը, կազմակերպւելով այնտեղ վնասարարութիւն ու սարսուտ:

4) Մեր գյուղի աշխատանքի թերութիւնների չորրորդ պատճառն այն է, վոր տեղերում դաւանող մեր մի շարք բնիկները չդիտեն վերակառուցել կուլակութեան դեմ մղվող պայքարի ճակատը, չեն հասկանում, վոր վերջին ժամանակներս փոխվել է դատակարարային թշնամու դործելակերպը գյուղում և վոր դրա համաձայն պետք է փոխեն իրենց տակտիկան, վորպիսով հաջողութիւն ձեռք բերեն: Թշնամին հասկացել է փոխված դրութիւնը, հասկացել է գյուղի նոր իրավակարգի ուժն ու կարողութիւնը, փոխել է իր դործելակերպը՝ կոտնտեսութիւնների դեմ ուղղակի

զբոհ տալուց անցել և ընդհատակյա աշխատանքի: Իսկ մենք այդ չենք հասկացել, նոր սլաքանները չենք բմբոնել և շարունակում ենք փնտռել դատակարարային թշնամուն այնտեղ, վորտեղ նա չկա այլևս: շարունակում ենք մեր հին տակտիկան՝ պարզ ձևով պայքարել գյուղում կուլակութեան դեմ, մինչդեռ նա, հենց այդ տակտիկան, վաղուց արդեն հնացել է:

Դատակարարային թշնամուն փնտռում են կոտնտեսութիւնները և գյուղ, փնտռում են նրան, վորպէս դատակարարի զիմադներ ունեցող մի մարդ, ահագին ատամներով, հաստ պարանոցով, դանակը ձեռքին: Փնտռում են այն կուլակին, վորին ճանաչում ենք մենք պրակտիկայից: Սակայն այդպիսի կուլակներ վաղուց արդեն չկան յերկրի յերեսին: Ներկայիս կուլակները և յենթակուլակները, գյուղի ներկայիս հակախորհրդային տարրերը մեծ մասամբ «խաղաղ», «մեղրածոր», համարյա «սուրբ» մարդիկ են, կարիք չկա կոտնտեսութիւնից հեռու փնտռել նրանց: Նրանք հասնում են հենց կոտնտեսութեան մեջ և վարում են այնտեղ պահեստավորների, ծախսարարների, հաշվետարների, քարտուղարների և այլ պաշտաններ: Նրանք յերբեք չեն ասի՝ «Կորչեն կոտնտեսութիւնները»: Նրանք կոտնտեսութիւններին «կողմնակից են», սակայն կոտնտեսութիւններում սարսուտային ու վնասարար աշխատանք են կատարում, վոր կոտնտեսութիւնները վաղ չեն պրծնի նրանց ձեռքից: Նրանք յերբեք չեն ասի՝ «Կորչեն հացամթերումները»: Նրանք հացամթերումներին «կողմնակից են»: Նրանք միմեծ են դեմադրողայի և պահանջում են, վոր կոտնտեսութիւնն անասնաբուծութեան համար յերեք անգամ ավելի մեծ ֆոնդ կազմի, քան պահանջում է դործը, վոր կոտնտեսութիւնը յերեք անգամ ավելի մեծ աղահոգադրական ֆոնդ կազմի, քան պահանջում է դործը, վոր կոտնտեսութիւնը հանրային սննդի համար յուրաքանչյուր բանվորին տա որական վեցից մինչև տասը ֆունտ հաց և այլն: Հասկանալի չե, վոր այդպիսի «ֆոնդերից» և հանրային սննդի համար այդքան հաց տրուվելուց հետո, այդպիսի խարդախ դեմադրողայից հետո, կոտնտեսութեան տնտեսական կորուստներ պետք է թուլանա և հացամթերումների համար բան չպետք է մնա:

Այդպիսի ճարպիկ թշնամուն տեսնելու և դեմադրողայի չենթարկվելու համար պետք է ունենալ հեղափոխական դատաւորութիւն, պետք է ընդունակութիւն ունենալ պատուելու թշնամու

դիմակը, ցույց տալու հարմարեցանքներն նրա խելական հակա-
հերպետական դեմքը: Սակայն գյուղում մենք չափ ունենք
արդյոք այդպիսի համակարգում ունեցող կոմունիստներ: Կոմու-
նիստները հաճախ վոչ միայն չեն մերկացնում դատակարգային
այդպիսի թշնամիներին, այլ ընդհակառակը՝ իրենք են յանխաղ-
վում նրանց խարդախ դեմագոգիային և դնում են նրանց պոչից:

Չսկստելով դատակարգային թշնամուն՝ իր նոր դիմադրով, և
անխաղով լինելով մերկացնել նրա խարճարայական մեքենա ու հուն-
ները, մեր մի քանի ընկերներ հաճախ հանգստացնում են իրենց,
ասելով, վոր այլևս իրր թե կուլակ չկա աշխարհում, թե հակա-
խորհրդային տարրերը գյուղում արդեն վոչնչացվել են, չեորհիվ
կուլակություն՝ վորպես դատակարգի՝ վերացման քաղաքականու-
թյան, և թե այդ պատճառով կարելի չէ հաշտվել աշխարհի
«չեղոք» կոլտնտեսությունների գոյություն հետ, վորոնք վոչ
բայլերիկյան են, վոչ ել հակախորհրդային, և վոր նրանց մի մասն
ինքնիքն, այսպես ասած, տարերային կարգով պետք է անցնի
խորհրդային իշխանության կողմը: Սակայն, դա խոր մոլորու-
թյուն է, ընկերներ: Կուլակները ջախջախել են, սակայն դեռ
հեռու չեն վերջնականապես վոչնչացված լինելուց: Դեռ ավելին,
նրանք դեռ չափով վերջնականապես չեն վոչնչացվել, յեթե կո-
մունիստները հորանջեն ու բարեհոգություն անեն, յենթադրե-
լով, վոր կուլակներն իրենք ղեկեղման կմտնեն, այսպես ասած՝
իրենց տարերային դարդացման կարգով: Ինչ վերաբերում է «չե-
ղոք» կոլտնտեսություններին, ապա այդպիսիները չկան և չեն ել
կարող լինել ընտրյան մեջ: «Չեղոք» կոլտնտեսություններն այն
մարդկանց ֆանտազիան է, վորոնց աչք է տրված վոչինչ չանեն-
լու համար: Դատակարգային այնպիսի սուր պայքարի պայմաննե-
րում, վոր գոյություն ունի այժմ մեղ մոտ, խորհրդային յերկ-
րում, «չեղոք» կոլտնտեսությունների համար այլևս տեղի չի
մնում: Այդ պայմաններում կոլտնտեսությունները կարող են լի-
նել կամ բայլերիկյան, կամ հակախորհրդային: Յեվ յեթե մենք
չենք ղեկավարում այս կամ այն կոլտնտեսությունը, այդ նշանա-
կում է, վոր նրան ղեկավարում են հակախորհրդային տարրերը
այդտեղ վոչ մի տարակույս չի կարող լինել:

5) Վերջապես գյուղի մեր աշխատանքի թերություն մի պատ-
ճառ ևս: Այդ պատճառն այն է, վոր թերադնահատվում է կոմու-
նիստների ղերն ու պատասխանատվությունը կոլտնտչինարարու-

թյան առարկիղում, թերադնահատվում է կոմունիստների ղերն ու
պատասխանատվությունը հացամթերումների առարկիղում: Խո-
սելով հացամթերումների դժվարությունների մասին, կոմունիստ-
ները սովորաբար պատասխանատվությունը գցում են գյուղացինե-
րի վրա, պնդելով, թե ամեն բանի մեջ մեղավոր են գյուղացինե-
րը: Սակայն այդ բնավ ճիշտ չէ և միանգամայն անիրավացի: Այս-
տեղ գյուղացիները մեղք չունեն: Յեթե խոսքը վերաբերում է պա-
տասխանատվությանն ու հացամթերումներ, ապա պատասխանա-
տվա իրյունն ամբողջովին ու լիովին ընկնում է կոմունիստների
վրա: Այստեղ ամեն բանում մեղավոր ենք միայն մենք կոմունիստ-
ներս:

Աշխարհում չկա և չի յեղել այնպիսի հզոր և հեղինակավոր
իշխանություն, ինչպիսին է մեր խորհրդային իշխանությունը:
Աշխարհում չկա և չի յեղել այնպիսի հզոր ու հեղինակավոր կու-
լակցություն, ինչպիսին է մեր կոմունիստական կուլակցու-
թյունը: Վոչ վոչ չի խանդարում և չի կարող խանդարել մեղ կոլտնտե-
սությունների դործն առաջ տանել աշխարհ, ինչպես պատճառում են
կոլտնտեսությունների շահերը, պետություն շահերը: Յեվ յեթե
մեղ չի հաջողվում կոլտնտեսությունների դործն միշտ վարել այն-
պես, ինչպես պահանջում է լենինիզմը, յեթե մենք հաճախ թույլ
ենք տալիս մի շարք կոպիտ, աններելի սխալներ, որինակ՝ հա-
ցամթերման դժուր, ապա մեղավոր ենք մենք, և միայն մենք:

Մեմք ենք մեղավոր, վոր չկարողացանք տեսնել հացահատիկի
կոլտնտեսական առևտրի բացառական կողմերը և թույլ տվինք
ամենակոպիտ սխալներ: Մեմք ենք մեղավոր, վոր մեր մի շարք
կազմակերպությունները կարլիցին կոլտնտեսություններից,
հանգստացան դափնիների վրա և անճատուր յերան ինչնառուի
տարերբին: Մեմք ենք մեղավոր, վոր մեր մի շարք ընկերները
մինչև այժմ ել ղերադնահատում են կոլտնտեսությունները, վոր-
պես մասսայական կազմակերպության ձև, չհասկանալով, վոր
բանը վոչ այնքան ինքը ձևն է, վորքան այն, վոր ինքներս ստանձ-
նենք կոլտնտեսությունների ղեկավարությունը և դուրս չարտենք
կոլտնտեսությունների ղեկավարությունից հակախորհրդային
տարրերին: Մեմք ենք մեղավոր, վոր չտեսանք նոր պայմանները
և չհասկացանք քողարկված դործող դատակարգային թշնամու
նոր դործելակերպը:

Հարց է ծագում, թե ինչ մեղք ունեն այստեղ գյուղացիները:

Յեա գիտեմ կոլտնտեսություններ ժամող խմբեր, վորոնք պար-
զանում ու ծաղկում են, կանոնավոր կերպով կատարում են պե-
տության առաջադրանքները և որեցոր ամբողջում են տնտեսա-
պես: Մյուս կողմից յես գիտեմ նաև այդ կոլտնտեսություննե-
րին հարևան այնպիսի կոլտնտեսություններ, վորոնք հնաշաժ ա-
ռաջիկաների հետ միատեսակ բերք ունենալուն և նրանց հետ միա-
անասկ որոշեկալով պայմանների մեջ դնելու, ուժասպառ են լի-
նում ու քայքայվում: Ի՞նչն է դրա պատճառը: Դրա պատճառն
այն է, վոր կոլտնտեսությունների առաջին խմբում ղեկավա-
րում են խիստ կոմունիստներ, իսկ յերկրորդ խմբում ղեկա-
վարում են գլխերին զղակ չունեցողները, միշտ և՛ կուսակ-
ցական տոմար դրապանում, սակայն և այնպես գլխներին զղակ չու-
նեցողները:

Հարց ե ծագում՝ Ի՞նչ մեղք ունեն այստեղ գյուղացիները:

Կոմունիստների ղերի ու պատասխանատվության թերադնա-
հատման հետևանքն է հանդիսանում այն, վոր հաճախ մեր գյուղի
աշխատանքի թերությունների պատճառը փնտրում են վոչ այնտեղ,
վորտեղ պետք է փնտրել, և այդ պատճառով թերությունները չեն
վերացվում:

Վոչ թե գյուղացիների մեջ պետք է փնտրել հացամթերումնե-
րի դործում մեր հանդիպած դժվարությունների պատճառը, այլ
հենց մեր սեփական շարքերում, վորովհետև մենք կանգնած ենք
խլիանության գլուխ, մեր տրամադրության տակ կան պետու-
թյան միջոցները, մենք կոչված ենք ղեկավարելու կոլտնտեսու-
թյունները և մենք պետք է կրենք գյուղի աշխատանքի լիակատար
պատասխանատվությունը:

Սրանք են այն գլխավոր պատճառները, վորոնք վորոշելին
գյուղի մեր աշխատանքի թերությունները:

Կարելի չե կարծել, թե յես շատ մոայլ պատկեր նկարեցի,
թե մեզ մոտ գյուղի ամբողջ աշխատանքը բաղկացած է միմիայն
թերություններից: Սակայն դա ճիշտ չե, իհարկե: Իրոք մեր գյու-
ղի աշխատանքը, այդ թերությունների հետ միասին, ունի նաև
մի շարք ամենալուրջ և վճռական նվաճումներ: Սակայն յես հա-
ռի սկզբում արդեն ասացի, վոր իմ նպատակը չի բնութագրել մեր
նվաճումները, վոր յես մտադրվեցի խոսել մեր գյուղի աշխա-
տանքի թերությունների մասին միայն:

Հնարավոր ե արդյոք ուղղել այդ թերությունները: Անպայման
հնարավոր ե: Կուղղենք արդյոք մենք այդ թերություններն ա-
մենամոտ ժամանակում: Այո, անպայման կուղղենք: Այդտեղ վոչ
մի տարակույս լինել չի կարող:

Յեա կարծում եմ, վոր մեքենատրակտորային կայանների և
խորհանտեսությունների քաղ-բաժինները հանդիսանում են այն
վճռական միջոցներից մեկը, վորոնց ոգնությամբ կարելի չե ա-
մենակարճ ժամանակամիջոցում վերացնել այդ թերությունները:

(Բուռն, յերկարատև ծավեր):



Յեխեկիական խմբագիր՝ Մ. Յիրբի
Սրբագրիչ՝ Ա. Տեր-Մկրտչյան
Հանձնված է արտադրության 23 հունվարի 1933թ.
Ստորագրված է տպագրելու 27 հունվարի 1933թ.
Ցիքած 15.000 Հրատ. № 78 41.000 տպ. թշ.

Պետհրատի տպարան, Պատվեր № 214, Գլավլիտ № 7711 (բ)։

<< Ազգային գրադարան



NL0184077

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

И. СТАЛИН
О РАБОТЕ В ДЕРЕВНЕ

Издательство ЦККП (б) А.
Партиздат 1988 Эриксон